## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N « ԿՄՀՔ -ՄԱԾՁԲ-23/70»

16 հոկտեմբեր 023թ

ք. Հրազդան

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Անհատ Ձեռնարկատեր Հրայր Սարգսյանը, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը ստանձնում է ծառայողական մեքենայի շարժիչի վերանորոգման աշխատանքների մատուցման պարտավորությունը, (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման

արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է

260000/երկու հարյուր վաթսուն հազար/ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը(եկամտային հարկ,պարտադիր կուտակային կենսաթոշակային վճար), տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| Հրազդանի համայնքապետարան | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք | Ք. Հրազդան ՎԱՆԱՏՈՒՐ 440 |
| Սահմանդրության հրապարակ 1 | « ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հրազդանի ՏԳԲ | Հ/Հ 220349825087000 |
| Հ/Հ 900122001465 | ՀՎՀՀ 40592525 |
| ՀՎՀՀ 03027114 | |
| Համայնքի ղեկավար՝ | |
| ------------ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ____________ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ |

Հավելված N 1
16 հոկտեմբեր 2023 թ. կնքված
ԿՄՀՔ –ՄԱՇՁԲ-23/70 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | մատուցման | | |
| չ/հ | (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 44112610 | Ծառայողական մեքենայի (CHEVROLET NIVA 21230GLS)շարժիչի վերանորոգման աշխատանքներ | Ծառայողական մեքենայի (CHEVROLET NIVA 21230GLS)շարժիչի վերանորոգման աշխատանքներ | դրամ | 260000 | 260000 | 1 | Ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք | 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում: |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք
Սահմանադրության հրապարակ 1 Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114
Համայնքի ղեկավար՝
Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Հրազդան ՎԱՆԱՏՈՒՐ 440
« ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220349825087000
ՀՎՀՀ 40592525

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
16 հոկտեմբեր 2023 թ. կնքված
ԿՄՀՔ –ՄԱՇՁԲ-23/70 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 44112610 | Ծառայողական մեքենայի (CHEVROLET NIVA 21230GLS)շարժիչի վերանորոգման աշխատանքներ | | | | | | | | | | 260000 | 260000 | 260000 | 260000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք
Սահմանադրության հրապարակ 1 Հրազդանի ՏԳՓ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114
Համայնքի ղեկավար

Ս.ՍԻՐՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Հրազդան ՎԱՆԱՏՈՒՐ 440
« ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220349825087000
ՀՎՀՀ 40592525

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ